

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Տարբերակված ուսուցումը կենսաբանության դասավանդման գործընթացում

ԱՌԱՐԿԱ՝ Կենսաբանություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարմեն Հարությունյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Հարթաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Շուշանիկ Շալունց, կ.գ.թ., դոցենտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----	3
Գլուխ 1. Տարբերակված ուսուցման բնութագիրը, դրա կարևորությունը կրթական բազմազան կարիքներ ունեցող աշակերտների համար: Տարբերակված հանձնարարությունը եւ գնահատումը	
1.1 Տարբերակված ուսուցման բնութագիրը -----	4
1.2 Տարբերակված ուսուցման կարևորությունը կրթական բազմազան կարիքներ ունեցող աշակերտների համար-----	10
1.3 Տարբերակված հանձնարարություն եւ գնահատում-----	12
Գլուխ 2. Տարբերակված ուսուցումը կենսաբանության դասավանդման գործընթացում և տարբերակված ուսուցմամբ դասի պլանավորման նմուշ	
2.1. Տարբերակված ուսուցումը կենսաբանության դասավանդման գործընթացում -----	14
2.2. Տարբերակված ուսուցմամբ դասի պլանավորման նմուշ -----	16
Եզրակացություններ -----	18
Գրականություն-----	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության զարգացման ներկա պայմաններում կրթական համակարգը նոր մտածելակերպով օժտված քաղաքացի ձևավորելու ծանր բեռ է կրում իր ուսերին: Այն պատվով իրականացնելու համար անխուսափելի են դասավանդման, ուսուցման, գնահատման և այլ գործառնություններում այլընտրանքային նոր մոտեցումների ներմուծումն ու կիրառումը :

Թեմայի արդիականությունը՝

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապատելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Տարբերակված ուսուցման ներդրումը նշանակում է ուսուցման արդյունավետությունը բարձրացնող ևս մեկ միջոց, որը հնարավորություն է տալիս ուսուցչին դասապրոցեսը դարձնել ավելի բազմազան ու հետաքրքիր բոլոր աշակերտների համար:

Աշխատանքի նպատակն է՝ դիտարկել տարբերակված ուսուցման մեթոդիկան, բացահայտել դրա դերը կենսաբանության դասավանդման պրոցեսում և բարձրացնել դասի արդյունավետությունը:

Ուսումնասիրության օբյեկտը՝ տարբեր կարողությունների տեր աշակերտների ընկալումը և առաջադրանքների ժամանակ նրանց կողմնորոշվելու կարողությունները:

Ուսումնասիրության առարկան՝ Տարբերակված ուսուցումը կենսաբանության դասավանդման ժամանակ:

Խնդիրները՝

1. Ներկայացնել տարբերակված ուսուցման բնութագիրը,
2. Մատնանշել տարբերակված ուսուցման կարևորությունը կրթական բազմազան կարիքներ ունեցող աշակերտների համար,
3. Վեր հանել տարբերակված հանձնարարությունների եւ գնահատման կարևորությունը,
4. Ուսումնասիրել տարբերակված ուսուցումը կենսաբանության դասավանդման գործընթացում:

ԳԼՈՒԽ 1

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԴՐԱ ԿԱՐԵՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1.1 Տարբերակված ուսուցանման բնութագիրը

Ուսուցումը փոխներգործուն գործընթաց է ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Դա ուսուցանվող նյութի ընկալում (ուսուցողական ընկալում) է. կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի, հմտության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը:

Մանկավարժության մեջ ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբերի¹.

1. Բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)
2. Վերաբարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն (ըստ կրթական-ճանաչողական գործունեության բնույթի)
3. Ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)

Կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր, գրավոր ստուգումներ և ինքնաստուգումներ:

Կրթական-ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ. որոշակի խթաններ՝ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պատասխանատվության զգացում ունենալուն, պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, հմտություններ և կարողություններ:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն

¹ Գ.Ե. Ղուլումյան., «Մանկավարժություն», գիրք 1-ին, Երևան, 2005 թ, Երևան, 2005 թ, էջ 14

ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասսիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում²:

Հատուկ կրթության զարգացման առավել տարածված ուղին դեռևս տարբերակված ուսուցումն է որպես առավել համապատասխանող՝ այժմ գոյություն ունեցող կադրերի պատրաստման համակարգին և դժվարություններ ունեցող երեխաների և հաշմանդամների նկատմամբ մեր հասարակության մեջ ձևավորված վերաբերմունքի ստերիոտիպին: Ինտեգրացված ուսուցումը մանկավարժից պահանջում է պատրաստվածության բոլորովին այլ մակարդակ, բարձր արհեստավարժություն, ստեղծագործություն, փորձ և վարպետություն: Առանձնահատուկ կրթական հնարավորություններով և սահմանափակ աշխատունակությամբ մարդու ինտեգրումը հասարակության մեջ, ներկա դրությամբ, նշանակում է. հասարակական կյանքի բոլոր տեսակներում նրան բոլոր իրավունքների և իրական հնարավորությունների ընձեռման գործընթաց և արդյունք՝ հասարակության մյուս անդամների հետ հավասար պայմաններում, որը կոմպենսացում է նրա զարգացման խանգարումներն ու կենսագործունեության հնարավորությունների սահմանափակումը: Ժամանակակից ռուս դեֆեկտոլոգների աշխատանքների վերլուծությունը, մասնավորապես Ն. Ն. Մալոֆեևի հետազոտությունները, թույլ են տալիս խոսել ինտեգրացիայի զարգացման երկու հնարավոր ուղիների մասին: Հեղինակն առանձնացնում է ինտեգրացման զարգացման հեղափոխական և էվոյուցիոն ուղիները: Գիտնականներն առաջարկում են ինտեգրացված ուսուցման կազմակերպման հետևյալ ձևերը

- ուսուցում հանրակրթական դպրոցների սովորական դասարաններում,
- ուսուցում հանրակրթական դպրոցների հատուկ դասարաններում, մասնակի ինտեգրացում արտադասարանական գործունեության ժամանակ,
- ուսուցում շտկողական հաստատությունում և աշակերտի տեղափոխում հանրակրթական դպրոց,

² Алехин А.Ю. Общие методы обучения в школе. — К.: Радянська школа, 1983. — с 145.

- զարգացման խանգարումներով անձանց լրիվ կամ մասնակի ինտեգրացում՝ մասնագիտական ուսուցման ընթացքում:

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին: Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները,
2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների
3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման:

Ամենատարածված ներդասարանային տարբերակման ձևը սովորողների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է:

Օրինակ՝

- 1-ին մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացնելով գլխավոր մտքերը:

- 2-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան և հարցադրումներ:

- 3-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, արտահայտել սեփական դիրքորոշումը:

Օրինակ՝ հաշվի առնելով երեխաների անհատական կարողությունները կարելի է ցուցաբերել այսպիսի մոտեցում՝.

I ՄԱԿԱՐԴԱԿ.

Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը:
Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը:

II ՄԱԿԱՐԴԱԿ.

Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը:
Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանալ նրանց զգայական ապրումները: Իմանալ բառի տեսակներն ըստ կազմության:
Տարբերակել պարզ և բարդ բառերը:

III ՄԱԿԱՐԴԱԿ

Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը:
Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանալ նրանց զգայական ապրումները: Իմանալ բառի տեսակներն ըստ կազմության:
Տարբերակել պարզ և բարդ բառերը:

Անրաժեշտ է տարբերակված առաջադրանքներ տալ տարբեր ձևերով.

- Ուսուցիչն ընտրում է առաջադրանք յուրաքանչյուր աշակերտի համար:
- Աշակերտն ինքն է ընտրում իր առաջադրանքը:

Այս դեպքում ուսուցիչը պարտավոր է նախապես սովորողներին ներկայացնել առաջադրանքի բարդությունը և խորհուրդներ տալ, թե ո՞ր առաջադրանքն ընտրի: 2-րդ դեպքում ուսուցիչը կարող է ներկայացնել առաջադրանքի բարդությունը, բայց ընտրությունը թողնել աշակերտին: 3-րդ դեպքում աշակերտները իրենք են որոշում առաջադրանքի բարդությունը, իրենք էլ ընտրում: Կամավոր ընտրության սկզբունքով կատարվող առաջադրանքները կարող են նաև աշակերտները իրենք գտնել ու առաջարկել: Առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը կամ էլ բացթողումների լրացմանը:

Տարբերակված ուսուցման ժամանակ աշակերտները կարող են ստանալ ծրարներում համապատասխան հրահանգավորումներով առաջադրանքներ՝ գծագրեր, նկարներ: Աշակերտն անհրաժեշտության դեպքում կարող է դիմել դրանց օգնությանը:

Տարբերակված ուսուցման ներդրման ժամանակ բացահայտել են, որ շատ աշակերտներ, որոնք այս կամ այն առարկայից ունեցել են խոր ընդունակություններ, չեն ցանկացել ընտրել առավելագույն մակարդակը: Այդպիսի պատկեր է նկատվել նաև մնացած առարկաների նկատմամբ: Նշանակում է, որ երբեմն աշակերտը մի առարկայից ընտրում է նվազագույն մակարդակը, նպատակ չի հետապնդում, որպեսզի մյուս առարկայից ընտրի առավելագույնը: Այդպիսի աշակերտի հետաքրքրությունները այլ են. սիրում է զբաղվել սպորտով, արվեստով, շփվել ընկերների հետ³:

Տարբերակված ուսուցում կազմակերպելիս ուսուցիչը պետք է ունենա հստակ նպատակադրումներ: Ուսումնական որոշակի նյութի ուսումնասիրությունից և ուսումնասիրության արդյունքները չափելուց հետո դասարանը „բաժանվում է,, խմբերի.

1 խումբ--ուսումնական նյութը յուրացրած աշակերտներ, որոնց հետ անհրաժեշտ է տանել աշխատանքներ գիտելիքների ընդլայնման և խորացման ուղղությամբ:

2 խումբ—աշակերտներ, որոնք լավ չեն յուրացրել ուսումնական նյութը և ունեն բացթողումներ: Նրանց հետ տարվում են համապատասխան աշխատանքներ:

3 խումբ—աշակերտներ, որոնք ունեն խնդիրներ ուսումնական նյութի յուրացման հարցում: Նրանց համար մշակվում են համապատասխան առաջադրանքներ:

2-րդ խմբի աշակերտների համար որպես խորհրդատու և ուսուցչի օգնական կարող են լինել 1-ին խմբի աշակերտները, իսկ 3-րդ խմբի աշակերտների համար՝ 1-ին և 2-րդ խմբի աշակերտները:

Այսօր մենք կարող ենք տեսնել դեֆեկտոլոգիական գիտության և տասնյակ տարիների ընթացքում մշակված զարգացման տարբեր խանգարումներ ունեցող անձանց ուսուցման մեթոդապես տարբերակված համակարգի լոգոման վտանգավոր գործընթացներ: Մեր կարծիքով, տարբերակված ուսուցումը չի բացառում ինտեգրացված ուսուցումը, այլ լրացնում և հարստացնում է այն՝ դրա հետ մեկտեղ լուծելով յուրաքանչյուրի սեփական խնդիրները, իսկ ընդհանուր առմամբ, կենսագործունեության սահմանափակ հնարավորություններով անձանց օգնում է

³ Щуркова Н.Е. и др., Новые технологии воспитательного процесса, Москва, 1993., с. 131-133

հաղթահարել դժվարությունները, կատարելա գործվել իրենց հետագա կյանքում և ընտրած մասնագիտական գործունեության մեջ⁴:

1.2 Տարբերակված ուսուցման կարևորությունը կրթական բազմազան կարիքներ ունեցող աշակերտների համար

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում տարբերակված ուսուցման կիրառումը կարևոր մոտեցում է. այն նպաստում է բոլոր աշակերտների կրթական կարիքները հաշվի առնելուն: Տարբերակված ուսուցման իրագործումը չի պահանջում թանկարժեք տեխնոլոգիաների կիրառում. այն կարող է իրականացվել նաև դասավանդման պարզ տեխնոլոգիաների միջոցով: Մանկավարժների մեծ մասը կարևորում է ուսուցման գործընթացի հարմարեցումը աշակերտների տարբեր կարիքներին, սակայն գործնականում քչերն են իրականացնում տարբերակված ուսուցում: Այս փաստը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով. դասավանդման որոշ ոճերի ավանդական կիրառումը, անհրաժեշտ պատրաստվածություն չունենալը, աշակերտների անհաջողությունները նրանց կրթական կարիքներին ու ոչ թե անարդյունավետ դասավանդմանը վերագրելը և այլն: Թոմիլսոնը տարբերակված ուսուցումը սահմանել է որպես դասավանդման փիլիսոփայություն՝ հիմնված աշակերտների պատրաստվածության տարբեր մակարդակների, հետաքրքրությունների և սովորելու յուրահատկությունների և ունակությունների վրա⁴: Տարբերակված ուսուցման հիմնական խնդիրը յուրաքանչյուր աշակերտի սովորելու կարողության բարելավումն է: Կան ուսուցումը տարբերակված դարձնելու բազմաթիվ ձևեր, որոնց կիրառման արդյունքում այն հնարավոր է համապատասխանեցնել աշակերտների բազմազան կարիքներին: Ուսուցման տարբերակումը սոսկ դասավանդման ռազմավարություն չէ, այլ դասավանդելու և սովորելու նկատմամբ յուրատեսակ մանկավարժական մոտեցում: Տարբերակված ուսուցումը, նույն նյութի դասավանդումն է տարբեր մոտեցումներով և ուսուցչի կողմից դասերի անցկացումն է՝ ելնելով յուրաքանչյուր աշակերտի

⁴ Մ. Սուքիասիան, Մանկավարժական տեխնոլոգիաների դերն ուսուցման գործընթացում, Երեվան ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 104-108

կարողությունից: Յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքներին իրոք համապատասխանող ուսուցում կազմակերպելու դեպքում ուսուցիչը դառնում է ներքոնշյալ բոլոր փուլերում որոշում կայացնող. ա) ուսուցման պլանավորում (նախնական գնահատում), բ) ուսուցման ուղղորդում (ընթացիկ կամ ձևավորող գնահատում), գ) գնահատող ուսուցում (ամփոփիչ գնահատում): Գնահատումը և տարբերակված ուսուցումը փոխկապակցված են. ձևավորող և ամփոփիչ գնահատումների միջոցով հնարավոր է լինում պարզել, թե որքանով է դասավանդված նյութը յուրացվել տարբեր աշակերտների կողմից: Ոչ բոլոր աշակերտներն են սովորում նույն արագությամբ և նույն ձևով: Ավանդաբար աշակերտների սովորելու միջև եղած տարբերությունները կարողություններին, ռասայական, սեռային, լեզվական ու սոցիալտնտեսական առանձնահատկություններին վերագրելը պարզապես օգտագործվել է նրանց՝ տարբեր հաստատություններում, հատուկ դպրոցներում կամ դասարաններում առանձնացնելու համար: Այս մոտեցումը որոշակի աշակերտների հանդեպ հանգեցրել է խտրական վերաբերմունքի՝ խոչընդոտելով նրանց՝ հասակակիցների միջավայրում կրթություն ստանալու իրավունքի իրացմանը: Նման մոտեցումը շրջանցում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի 24-րդ հոդվածը: Այս հոդվածով հռչակվում է կրթություն ստանալու բոլոր, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնարար իրավունքը: Նրանում ասված է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները ոչ միայն չպետք է ենթարկվեն խտրականության, այլև պետք է հնարավորություն ունենան իրենց հասակակիցների հետ հանրակրթական համակարգում հավասար հիմունքներով ստանալու բարձրորակ կրթություն: Տարբերակված ուսուցումը ենթադրում է ուսուցման և դասավանդման նյութերի հարմարեցում աշակերտների կրթական կարիքներին և նրանց հնարավորություն է տալիս սովորելու իրենց համար ընդունելի եղանակով: Ավանդական եղանակով դասավանդումը նախատեսված է միջին վիճակագրական աշակերտի համար, այն հնացած է և խթանում է խտրականությունն այն աշակերտների նկատմամբ, ովքեր դպրոցում հաջողության հասնելու համար այլընտրանքային մանկավարժական մոտեցումների կարիք ունեն: Տարբերակված ուսուցումն այլևս դասավանդման տարբերակ չէ, այլ՝ անհրաժեշտություն: Բազմազան աշակերտների կրթական կարիքներին համապատասխան կրթություն

կազմակերպելուն ընդառաջ՝ Միացյալ Նահանգներում, Կանադայում, Ավստրալիայում և Արևմտյան Եվրոպայում ընդունվել և կիրառվել է տարբերակված ուսուցումը: Այլ երկրներ՝ ներառյալ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, վերջերս են վավերացրել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան» և այժմ զգում են այդ փաստի ազդեցությունը ներառական կրթության վրա: Այս համատեքստում, երբեմն նույնիսկ պահանջվում է կրթության կազմակերպման նոր ռազմավարությունների մշակում: Հայաստանում վերջին տարիներին շեշտը դրվել է տարբերակված ուսուցման վրա: Օրինակ՝ Առնաուդյանը, Գյուլբուդադյանը, Խաչատրյանը, Խրիմյանը և Պետրոսյանը (2004) հեղինակել են դասավանդման տարբեր մեթոդներ և ռազմավարություններ պարունակող մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար՝ ուղղված ուսուցումն ավելի փոխներգործուն դարձնելուն: Մեկ այլ ձեռնարկի հեղինակներ Վարդույանը, Հարությունյանը, Ջաղինյանը և Վարելյան (2003) ներկայացնում են ժամանակակից մանկավարժական մոտեցումները, տեսությունները, մեթոդները և գնահատումը: Ձեռնարկները նպատակ ունեն ուսուցիչներին օգնելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին՝ դասապրոցեսում ներառելու հարցում: Երևանում գործող Քայլ առ քայլ և IREX ոչ պետական կազմակերպությունների օժանդակությամբ բազմաթիվ նյութեր այլ լեզուներից հայերեն են թարգմանվել ուսուցիչների և ծնողների համար՝ ասպարեզ բերելով ավելի մասնակցային և փոխներգործուն մոտեցումներ: Տարբերակված ուսուցման արդյունավետության վերաբերյալ հետազոտությունները վկայում են, որ այսպիսի ուսուցումը բարձրացնում է աշակերտների մոտիվացիան, նյութի նկատմամբ հետաքրքրությունը, ուսման առաջադիմությունը, աշակերտներին հաղորդում ինքնավստահության, իսկ ուսուցիչներին՝ սեփական աշխատանքից գոհունակության զգացում: Նույն հետազոտությամբ նաև պարզվել է, որ փորձառու ուսուցիչներն առավել հակված են տարբերակված ուսուցում իրականացնելուն, քան սակավ փորձ ունեցողները: Ուսումնասիրվել է տարբերակված ուսուցման հիմնական տեսանկյունները, այն է՝ սովորողների բազմազանության կառավարում, դասավանդման յուրահատուկ մոտեցումների ընդունում, դասավանդման տարբեր մոտեցումների կիրառում, սովորողների անհատական կարիքների մշտադիտարկում և լավագույն

արդյունքների խրախուսում: Այս գլխում քննարկվում են բոլոր աշակերտների դասավանդմանն ուղղված մեթոդներն ու մոտոցումները⁵:

1.3 Տարբերակված հանձնարարություն եւ գնահատում

Աշակերտների նկատմամբ մոտեցումները տարբեր են. այս է տարբերակված ուսուցման սկզբունքը: Ուսուցման եւ գնահատման պրակտիկան կարող են տարբերակվել: Ուսուցիչները պետք է հաշվի առնեն, որ աշակերտները տարբեր կարողություններ, ուժեր եւ կարիքներ ունեն: Տարբերակված հանձնարարության և գնահատման բնութագրիչներն են՝

- Ընտրությունը հանդիսանում է գործընթացի բանալին: Ուսուցողական գործունեության ընտրություն, ինչպես նաև ընտրության գնահատումը:
- Կարևորագույն խնդիր է հաշվի են առնել աշակերտների ուժեղ / թույլ կողմերը:
- Անհատական և խմբային աշխատանքների բաշխումը կամայական է. ոմանք արդյունավետ կաշխատեն ինքնուրույն, ոմանք՝ կգերադասեն աշխատել տարբեր համագործակցային խմբերում :
- Հաշվի են առնվում աշակերտների ուսուցման եւ մտածողության արդյունավետ ուղղությունները:
- Ուսուցանվող նյութը հաստատուն է, որպեսզի բոլոր աշակերտները կարողանան հետադարձ կապեր ապահովել:
- Ծրագրի եւ խնդրի վրա հիմնված ուսուցման մեջ նույնպես կարելու է տարբերեցված ուսուցման եւ գնահատման գործընթացը:
- Դասաժամերը եւ գնահատումները հարմարեցված են աշակերտների պահանջները բավարարելուն:

⁵ Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2010, էջ 121

ԳԼՈՒԽ 2

ՏԱՐԲԵՐԱԿԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ և ՏԱՐԲԵՐԱԿԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆՄՈՒՇ

2.1 Տարբերակված ուսուցումը կենսաբանության դասավանդման գործընթացում

Ուսուցիչը պետք է դասավանդման և ուսումնառության գործընթացը հարմարեցնի սովորողների առանձնահատկություններին, նախասիրություններին և կարողություններին՝ կիրառելով տարբերակված ուսուցման տարաբնույթ ռազմավարություններ: Կարևոր է, որ դասավանդման ընթացքում կիրառված մոտեցումները, աշխատանքների տեսակները և մեթոդները լինեն բազմազան և հետաքրքիր:

Դասավանդումը պետք է իրականացվի համագործակցության և հետազոտության վրա հիմնված ուսումնառության սկզբունքով: Հետազոտության վրա հիմնված ուսումնառությունը հենվում է սովորողների ինքնուրույն և համագործակցությամբ իրականացվող հետազոտությունների և գործնական ուսուցման վրա: Այն սովորողակենտրոն ուսուցում է, երբ սովորողը ուսումնառության ընթացքում ունի ակտիվ մասնակցային դերակատարություն: Ուսումնասիրվող նյութի շրջանակներում հետազոտվող հարցի, երևույթի վերհանումը, դրա ճիշտ ձևակերպումը, առաջ քաշված հարցերի լուծումները, եզրահանգումներ անելը սովորողի գործառույթն է: Դա թույլ է տալիս, որ սովորողը հասկանա ուսումնառվող նյութի բնույթը և առաջադրի գիտական հարցադրումներ, իրականացնի հետազոտություններ և հետևություններ անի:

Ուստի կենսաբանության դասին անհրաժեշտ է տարբերակված առաջադրանքների, միջառարկայական կապերի, գործընկերների հետ համագործակցության արդյունքում դասը դարձնել առավել արդյունավետ և այն կազմակերպել ժամանակակից պահանջներին համապատասխան:

Կենսաբանության դասասենյակը պետք է հազեցած լինի անհրաժեշտ դիդակտիկ նյութերով՝ կենսաբանության տարբերակված ուսուցման համար:

Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշել, թե ուսումնական նյութի յուրացումը ո՞ր մակարդակում կարող է իրականացվել: Սակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի հնարավորինս համակարգված: Եթե որևէ աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն՝ առավելագույն, ապա այդ հնարավորությունը նա պետք է ստանա: Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ կարողությունները, այլև հետաքրքրությունները:

Տարբերակված ուսուցումը կիրառելի է ինչպես տարբեր կարողություններով աշակերտների հետ, այլ նաև ապագա մասնագիտության մեջ կողմնորոշում ունեցող աշակերտների հետ (պետք է յուրահատուկ ուշադրություն դարձնել տվյալ աշակերտի առարկայական պատրաստվածության վրա):

Կենսաբանության դասաժամերին տարբերակված ուսուցումը կիրառելի է նաև մարդու սեռական օրգանները ուսումնասիրելիս: Նման դասաժամերին կարելի է օգտագործել սեռային տարբերակման մեթոդը: Կարելի է հանձնարարել կատարել նմանօրինակ առաջադրանքներ՝

Իգական սեռական համակարգ

Օրգանը	Կառուցվածքը	Ֆունկցիան

Ունակություններով պայմանավորված տարբերակումը ամենաշատ կիրառվող տարբերակման ձևն է: Դա պայմանավորված է առակայի բարդությամբ, և աշակերտների հոսքային ունակություններով: Որոշ աշակերտներ նախընտրում են հումանիտար առարկաները, որոշները մաթեմատիկական, ոմանք էլ բնագիտական: Ելնելով նման հոսքային տարբերակումից, կենսաբանության դասաժամերին պետք է առաջնորդել և խթանել բնագիտական առարկաների հանդեպ հակվածություն ունեցող աշակերտների հետաքրքրվածությունը առարկայի շրջանակներում:

Դասի ընթացքում և տնային առաջադրանքներ հանձնարարելիս նույնպես պետք է առաջնորդվել տարբերակված ուսուցման մեթոդով:

2.2 Տարբերկված ուսուցմամբ դասի պլանավորման նմուշ

Թեմա՝ «Մարդու արյունատար համակարգը»

Ստեղծագործական խաղ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»

I մակարդակ

- Սովորողը պետք է իմանա արյան շրջանառության մեծ և փոքր շրջանները, սրտի կառուցվածքը և աշխատանքը,
- կարողանա տարբերել զարկերակները, երակներ, մազանոթները,
- Իմանա սրտի բոլորաշրջանի, արյան ճնշման և անոթազարկի մասին:

Առաջադրանք

- Ի՞նչ է արյան շրջանառությունը,
- Ի՞նչ է զարկերակը, երակը, մազանոթը.
- Ի՞նչ է արյան ճնշումը, անոթազարկը:

II մակարդակ

- Սովորողը կարողանա բնութագրել զարկերակների, երակների և մազանոթների կառուցվածքն ու ֆունկցիաները,
- Հիմնավորի սրտում արյան միակողմանի հոսքը պայմանավորող գործոնները,
- Բնութագրի սրտի աշխատանքի փոփոխությունը ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում, կարողանա չափել արյան ճնշումը:

Առաջադրանք

- Որտե՞ղ է տեղակայված սիրտը,
- Որտե՞ղ են տեղակայված փեղկավոր փականները, կիսալուսնաձև փականները,
- Որտե՞ղ է արյան ճնշումն առավելագույն արժեք ստանում և որտե՞ղ նվազագույն:

III մակարդակ

- Սովորողը պետք է կարողանա մեկնաբանել արյունատար անոթների կառուցվածքի և ֆունկցիաների միջև եղած կապը,
- Բացատրի սրտի գործունեության, արյան ճնշման կարգավորման մեխանիզմները:

Առաջադրանք

- Երբ կծկվում են փորոքները, ո՞ր ուղղությամբ է հոսում արյունը,
- Ե՞րբ են փակվում կիսալուսնաձև փականները,
- Ե՞րբ կարող են առաջանալ սրտի, արյան անոթների հետ կապված հիվանդություններ:

Դասի ընթացքում առկա են սիրտը, արյունատար անոթները պատկերող ցուցապաստառներ, ճնշաչափ, անոթազարկը հաշվող սարք:

Եզրակացություններ

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Նմանատիպ կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին: Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

1. Դասի պլանավորման ժամանակ հաշվի են առնվել հետևյալ դրույթները.
 - ընտրված թեմայի նկատմամբ տարբեր մակարդակներում ներառված աշակերտների հետաքրքրությունները
 - տարբերակված աշակերտների համար նոր տեղեկատվության ընկալման մատչելի տարբերակները
 - օգտագործելով գծագրական դասակարգիչների և հարցադրումների միասնական համակարգ՝ աշակերտներին խորքային ու պատկերավոր ներկայացնել թեման՝ ելնելով հետաքրքրվածության մակարդակներից:

Կենսաբանության տարբերակված ուսուցումը նպատակ է հետապնդում դաստիարակել կենսաբանական և էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձ, ով՝

- կգիտակցի կյանքի՝ որպես երկրի վրա բարձրագույն արժեքի նշանակությունը
- կկարողանա բնության հետ իր հարաբերությունները կառուցել շրջակա միջավայրի նկատմամբ հարգանքի հիման վրա
- կլինի ներդաշնակ հասարակայնության և սեփական անձի հետ :

Գրականության ցանկ

1. Գ.Ե.Ղուլումյան, «Մանկավարժություն», գիրք 1-ին, Երևան, 2005 թ, Երևան, 2005 թ, էջ 14
2. Алехин А.Ю. Общие методы обучения в школе. — К.: Радянська школа, 1983. — с 145.
3. Щуркова Н.Е. и др., Новые технологии воспитательного процесса, Москва, 1993., с. 131-133
4. Մ. Սուքիասիան, Մանկավարժական տեխնոլոգիաների դերն ուսուցման գործընթացում, Երեվան ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 104-108
5. Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2010, էջ 121
6. Беспалько В.П. Слагаемые педагогических технологий.- М.: Педагогика, 1989. - 45с.